

Կ. Առուստամյան և Գ. Ավագյան

Ընտանիքի պլանավորման ծրագրերի առաջնային նպատակն է ապահովել կանանց և տղամարդկանց գիտակից մուտքը դեպի ծնողություն: Հակաբեղմնավորիչները կանանց և տղամարդկանց ապահովում են միջոցներով, որպեսզի նրանք երեխաներ ունենան երբ ուզում են և որքան ուզում են: Ընտանիքի պլանավորման արդյունավետությունը կախված է հակաբեղմնավորման մեթոդների իմացությունից և միջոցների մատչելիությունից, բավարարելու համար հնարավոր սպառողների տարբեր պահանջները: Մեթոդների մատչելիությունը, իր հերթին, կախված է ծառայություն տրամադրողների որակից և քանակից, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայությունից:

Այս գլխում ներկայացված ընտանիքի պլանավորման վերաբերյալ հարցերը ներառում են հակաբեղմնավորման մեթոդների իմացությունը, մեթոդների օգտագործումն անցյալում և ներկայում, ձեռքբերման աղբյուրները, չօգտագործման պատճառները, ապագայում օգտագործման ցանկությունը, ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրությունների ազդեցությունը և վերաբերմունքը ընտանիքի պլանավորմանը:

**5.1 Հակաբեղմնավորման մեթոդների իմացությունը**

Հակաբեղմնավորման մեթոդների իմացությունը նախապայման է դրանց օգտագործման համար: Իմացության վերաբերյալ տվյալները հավաքագրելիս, հարցվողներին խնդրվել է նշել բոլոր այն միջոցներն ու մեթոդները, որոնց միջոցով զույգերը կարող են հետաձգել կամ խուսափել հղիությունից: Չնշված մեթոդների դեպքում, հարցազրույցավարը նկարագրում էր մեթոդը և հարցնում, թե արդյոք նա գիտի այդ մեթոդը: Այսպիսով, հակաբեղմնավորման մեթոդների մասին իմացությունը սահմանվում է ուղղակի որպես այդ մեթոդի գոյության մասին իմացություն:

Հակաբեղմնավորման մեթոդները ներառում են ինչպես ժամանակակից, այնպես էլ ավանդական մեթոդները: Ժամանակակից մեթոդները ներառում են՝ հաբեր, ՆԱՊ, ներարկման միջոցներ, իմպլանտ, կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, անհետաձգելի բեղմնականիտում, մեխանիկական միջոցներ (դիաֆրագմա, փրփուր, գել, տղամարդու և կնոջ պահպանակ) և լակտացիոն ամենորեայի մեթոդներ: Ավանդական մեթոդները ներառում են՝ ժամանակավոր ինքնազսպում (օրացույցային մեթոդ) և ընդհատված սեռական հարաբերություն: Ի լրումն այս մեթոդների, հարցազրույցավարները հնարավորություն են ունեցել հարցաթերթում գրանցել նաև հարցվողների կողմից նշված այլ մեթոդներ:

Աղյուսակ 5.1-ը ցույց է տալիս կանանց տոկոսը, ովքեր լսել են հակաբեղմնավորման հատուկ մեթոդների մասին: Հակաբեղմնավորման մեթոդների մասին իմացությունը գրեթե նույնն է կանանց բոլոր խմբերում: Նրանց 94%-ը լսել է առնվազն մեկ մեթոդի մասին: Իմացության մակարդակը ամենաբարձրն է հարցման պահին ամուսնացած կանանց մոտ (99%), սակայն, նույնիսկ սեռական կյանքի փորձ չունեցող կանանց 84%-ը գիտի առնվազն մեկ մեթոդ: Արդյունքների հաջորդ քննարկումները ներառում են հարցման պահին ամուսնացած կանանց տվյալները, քանի որ նրանք առավել հակված են հղիանալու ռիսկին:

Ինչ վերաբերում է ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների իմացությանը, ապա հարցման պահին ամուսնացած կանանց 93%-ը լսել է ՆԱՊ-ի մասին, 90%-ը լսել է տղամարդու պահպանակի մասին և 83%-ը՝ հաբերի մասին: Հարցման պահին ամուսնացած կանանց ավելի քան երեք քառորդը լսել է ԼԱՄ-ի մասին: Ընդհատված սեռական հարաբերության մեթոդը ամենահայտնի ավանդական մեթոդն է (88%): Հարցման պահին չամուսնացած կանանց շրջանում ամենահայտնի մեթոդներն են պահպանակը, ՆԱՊ-ը և հաբերը:

Աղյուսակ 5.1 Հակաբեղմնավորման մեթոդների իմացությունը

Բոլոր կանանց, ինչպես նաև հարցման պահին ամուսնացած, հարցման պահին չամուսնացած կանանց, ովքեր երբևէ ունեցել են սեռական հարաբերություններ, և երբևէ չամուսնացած այն կանանց, ովքեր գիտեն որևէ հակաբեղմնավորման մեթոդ տոկոսային բաշխումն ըստ մեթոդների, Հայաստան 2000թ.

Հակաբեղմնավորման մեթոդ	Բոլոր կանայք	Հարցման պահին չամուսնացած		
		Հարցման պահին ամուսնացած կանայք	Կանայք, ովքեր երբևէ ունեցել են սեռական հարաբերություններ	Սեռական կյանքի փորձ չունեցող կանայք
<b>Ցանկացած մեթոդ</b>	<b>94.4</b>	<b>98.8</b>	<b>94.8</b>	<b>84.4</b>
<b>Ցանկացած ժամանակակից մեթոդ</b>	<b>93.8</b>	<b>98.0</b>	<b>94.2</b>	<b>84.3</b>
Հաբեր	78.3	83.3	78.6	66.9
ՆԱՊ	84.9	92.7	86.9	67
Ներարկումներ	42.9	48.9	44.0	29.1
Դիաֆրագմա	10.0	11.5	9.5	6.7
Փրփուր, գել, քուլք	19.0	21.5	21.2	12.8
Տղամարդու պահպանակ	85.9	90.1	86.6	76.2
Կանացի պահպանակ	22.5	24.6	21.4	18
Կնոջ ստերիլացում	40.8	47.5	40.4	25.9
Տղամարդու ստերիլացում	18.1	20.3	19.5	12.9
Իմպլանտներ	9.4	10.4	9.9	6.9
Շտապ բեղմնականխում	19.3	22.3	21.4	12.1
Լակտացիոն ամենորեա (LNU)	63.8	78.6	70.8	28.9
<b>Ցանկացած ավանդական մեթոդ</b>	<b>74.4</b>	<b>91.4</b>	<b>81.6</b>	<b>34.3</b>
Ժամանակավոր ինքնազսպում	53.3	65.0	59.6	25.6
Ընդհատված սեռական հարաբերություններ	69.3	88.0	76.8	25.3
<b>Ցանկացած ժողովրդական մեթոդ</b>	<b>5.3</b>	<b>7.0</b>	<b>6.5</b>	<b>1.2</b>
Լվացում	3.8	5.2	4.5	0.6
Այլ	1.5	1.8	2.0	0.6
<b>Ցանկացած ավանդական կամ ժողովրդական մեթոդ</b>	<b>74.5</b>	<b>91.6</b>	<b>82.1</b>	<b>34.4</b>
Իմացած մեթոդների միջին թիվը	6.2	7.1	6.5	4.2
Կանանց թվաքանակը (մարդ)	6430	4125	468	1838

Հայաստանի կանայք միջինում գիտեն հակաբեղմնավորման 6.2 մեթոդ: Ծանոթ մեթոդների միջին քանակը տարբեր է ըստ հարցվողների ամուսնական կարգավիճակի: Հարցման պահին ամուսնացած կանայք միջինում գիտեն 7.1 մեթոդ: Չամուսնացած կանանցից այն կանայք, ովքեր երբևէ ունեցել են սեռական հարաբերություններ միջին հաշվով գիտեն 6.5 հակաբեղմնավորման մեթոդ, և սեռական հարաբերությունների փորձ չունեցող կանայք միջին հաշվով գիտեն 4.2 մեթոդ:

Աղյուսակ 5.2-ը ցույց է տալիս հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր գիտեն առնվազն մեկ հակաբեղմնավորման մեթոդ ըստ հիմնական բնութագրիչների: Բացառությամբ ամենափոքր տարիքային խմբի, որևէ մեթոդի կամ ժամանակակից մեթոդների մասին իմացությունը չի տարբերվում և փաստորեն նույնն է բոլոր տարիքային խմբերում:

Հակաբեղմնավորման մեթոդների իմացության հարցում էական տարբերություն չկա ըստ բնակության վայրի, տարածաշրջանի կամ կրթական մակարդակի:

**Աղյուսակ 5.2 Հակաբեղմնավորման մեթոդների իմացությունն ըստ հիմնական բնութագրիչների**

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր գիտեն առնվազն մեկ հակաբեղմնավորման մեթոդ և ովքեր գիտեն առնվազն մեկ ժամանակակից մեթոդ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Գիտի որևէ մեթոդ	Գիտի որևէ ժամանակակից մեթոդ <sup>1</sup>	Կանանց թվաքանակը (մարդ)
(%,%)			
<b>Տարիքը</b>			
15-19	92.9	92.9	99
20-24	98.3	97.1	511
25-29	98.5	97.7	625
30-34	98.8	98.5	660
35-39	99.7	98.5	816
40-44	99.0	98.1	773
45-49	99.0	98.6	640
<b>Բնակավայրը</b>			
Քաղաքային	99.1	98.8	2391
Գյուղական	98.3	96.9	1733
<b>Մարզը</b>			
Երևան	98.4	98.4	1291
Արագածոտն	98.2	97.9	193
Արարատ	99.7	99.7	449
Արմավիր	100.0	99.4	373
Գեղարքունիք	99.1	98.0	341
Լոռի	99.6	98.9	323
Կոտայք	99.6	98.9	316
Շիրակ	96.8	92.6	388
Սյունիք	98.1	97.8	173
Վայոց ձոր	96.6	92.2	79
Տավուշ	99.2	98.9	198
<b>Կրթությունը</b>			
Տարրական/միջին	94.7	276	
Միջնակարգ	98.1	97.0	1537
Միջնակարգ-մասնագիտական	99.3	98.7	1603
Բարձրագույն	99.9	99.9	708
Ընդամենը	98.8	98.0	4125

<sup>1</sup> Կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, հաբեր, ՆԱՊ, ներարկումներ, իմպլանտներ, տղամարդու պահպանակ, կանացի պահպանակ, դիաֆրագմա, փրփուր կամ գել և լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՍ)

### 5.2 Հակաբեղմնավորման մեթոդների երբևէ օգտագործումը

Բոլոր կանանց, ովքեր լսել էին հակաբեղմնավորման մեթոդների մասին, հարցվել է, թե նրանք (կամ իրենց զուգընկերները) երբևէ օգտագործել են այդ մեթոդը, թե ոչ: Յուրաքանչյուր ծանոթ մեթոդի մասին հարցվել է առանձին: Հարցաթերթում կար լրացուցիչ հարցադրում այն կանանց, ովքեր նշել էին, որ չեն օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 5.3-ում, ինչպես բոլոր, այնպես էլ հարցման պահին ամուսնացած կանանց համար, ըստ տարիքային խմբերի (հինգ տարվա բաժանումով):

**Աղյուսակ 5.3 Հակաբեղմնավորիչների երբևէ օգտագործումը**

Բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր երբևէ օգտագործել են հակաբեղմնավորման որևէ մեթոդ, ըստ առանձին մեթոդների և տարիքի, Հայաստան 2000թ.

Տարիքը	Ժամանակակից մեթոդ										Ավանդական մեթոդ			Ժողովրդական մեթոդ			Կանանց թվաքանակը (մարդ)
	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Հարբեր	ՆԱՊ	Ներարկումներ	Պահպանակ	Կնոջ ստերոիդներ	Փրփուր/գել/քսուր	Շտապ թիվ/խում	ԼԱՄ	Որևէ ավանդական մեթոդ	Ժամանակակից մեթոդ	Ընդհատ. սեռ. հարաբեր.	Որևէ ժողով. մեթոդ	Այլ մեթոդներ	Կանանց թվաքանակը (մարդ)	
<b>ԲՈՒՆՈՐ ԿԱՆԱՅՔ</b>																	
15-19	3.0	2.1	0.2	0.2	0.0	0.4	0.0	0.0	0.0	1.3	1.4	0.0	1.4	0.0	0.0	0.0	1160
20-24	36.6	22.4	1.8	4.0	0.1	8.9	0.3	0.2	0.1	11.5	26.2	4.1	24.8	0.9	0.8	0.1	1007
25-29	71.4	48.6	4.7	13.8	0.5	23.6	0.3	0.5	0.2	23.5	54.6	13.0	49.7	2.7	2.2	0.5	769
30-34	80.5	56.6	7.2	23.1	0.8	22.8	1.9	1.0	0.8	25.5	62.3	17.7	57.9	4.1	3.6	0.5	763
35-39	78.7	54.7	6.4	24.5	0.6	22.3	2.4	0.5	0.6	25.5	60.7	21.1	52.5	4.8	4.2	0.6	962
40-44	73.8	48.3	4.8	17.4	0.8	18.7	4.0	0.3	0.4	23.5	57.4	17.3	53.0	5.6	4.4	1.2	947
45-49	68.6	47.0	5.1	13.6	0.9	15.2	4.4	0.9	0.7	23.6	51.4	19.6	42.9	6.8	5.1	1.7	822
Ընդամենը	55.8	37.7	4.1	13.0	0.5	15.0	1.8	0.4	0.4	18.2	42.4	12.5	38.1	3.4	2.7	0.6	6430
<b>ՀԱՐՑՄԱՆ ՊԱՅԻՆ ԱՍՈՒՄՆԱՑԱԾ ԿԱՆԱՅՔ</b>																	
15-19	35.4	25.0	2.1	2.8	0.0	4.8	0.0	0.0	0.0	15.4	16.0	0.0	16.0	0.0	0.0	0.0	99
20-24	70.7	43.4	3.5	7.5	0.3	17.1	0.6	0.5	0.3	22.6	50.5	8.1	47.8	1.8	1.6	0.2	511
25-29	85.1	57.8	5.8	16.5	0.6	27.9	0.3	0.6	0.2	28.1	65.4	15.6	59.7	3.3	2.7	0.6	625
30-34	88.0	62.1	8.3	26.1	0.7	25.2	2.2	1.1	1.0	26.8	68.6	19.3	64.1	4.1	3.6	0.5	660
35-39	88.1	61.6	7.3	28.1	0.7	25.0	2.7	0.6	0.8	28.5	68.0	23.8	58.8	5.5	4.8	0.7	816
40-44	83.0	54.8	5.4	20.5	0.9	20.5	4.6	0.3	0.5	27.4	65.2	19.8	60.2	6.0	4.8	1.2	773
45-49	76.6	52.0	5.0	16.3	1.1	17.3	5.0	1.0	0.6	25.6	58.3	22.4	48.3	7.3	5.2	2.1	640
Ընդամենը	81.5	55.2	5.9	19.6	0.7	22.0	2.7	0.7	0.6	26.5	62.2	18.4	56.0	4.7	3.8	0.9	4125

Նշում. 24 կին ընտրանքում (0.4%) նշել է, որ երբևէ օգտագործել է կանացի պահպանակ

Աղյուսակ 5.3-ը ցույց է տալիս, որ հարցման պահին ամուսնացած 10 կանանցից 8-ը երբևէ օգտագործել է հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Բոլոր կանանց մոտ երբևէ հակաբեղմնավորման որևէ մեթոդի օգտագործման մակարդակը զգալի ցածր է քան հարցման պահին ամուսնացած կանանց մոտ, քանի որ այն ներառում է կանանց, ովքեր երբեք չեն ունեցել սեռական հարաբերություններ (56 տոկոս՝ 82 տոկոսի դիմաց): Ամուսնացած կանայք ավելի շատ փորձել են ավանդական մեթոդ (62%), քան ժամանակակից մեթոդ (55%): Ամենատարածված մեթոդն է ընդհատված սեռական հարաբերությունը (56%): Այն երկու անգամ զերազանցում է պահպանակի (22%) կամ ՆԱՊ-ի (20%) երբևէ օգտագործումը: Հարցման պահին ամուսնացած կանանց 27 տոկոսը երբևէ օգտագործել է լակտացիոն ամենորեայի մեթոդը (ԼԱՄ), որը ընդհատված սեռական հարաբերություններից հետո, երկրորդ տարածված մեթոդն է:

Անհրժեշտ է նշել, որ չնայած Հայաստանում պետական սեկտորի միջոցով կանացի պահպանակ երբեք չի բաշխվել և չի վաճառվել դեղատներում, այնուամենայնիվ, կանանց 0.4 տոկոսը նշել է, որ երբևէ օգտագործել է: Դա կարելի է վերագրել կանացի և տղամարդկանց պահպանակների շփոթությանը: Ինչպես նաև հնարավոր է, որ ռեսպոնդենտը փորձել է օգտագործել կանացի պահպանակ արտասահմանում:

**5.3 Հարցման պահին հակաբեղմնավորիչների օգտագործումը**

Աղյուսակ 5.4-ը ներկայացնում է հարցման պահին հակաբեղմնավորիչների օգտագործման մակարդակը՝ բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց համար: Վերարտադրողական տարիքի յուրաքանչյուր 10 կանանցից շուրջ 4-ը օգտագործում են հակաբեղմնավորման որևէ մեթոդ, զրեթե բոլոր օգտագործողները հարցման պահին ամուսնացած կանայք են: Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ-ի արդյունքները վկայում են, որ ամուսնացած կանանց 61%-ն օգտագործում է հակաբեղմնավորման մեթոդ հարցման պահին:


**Աղյուսակ 5.4 Հակաբեղմնավորիչների օգտագործումը հարցման պահին**

Բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց ըստ հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման տոկոսային բաշխումն ըստ տարիքի, Հայաստան 2000թ. (%)

Տարիքը	Ժամանակակից մեթոդ								Ավանդական մեթոդ							
	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Հաբեր	ՆԱՊ	Ներարկումներ	Պահպանակ	Կնոջ ստեղծված/Փրփուր/գել/սուրճ	ԼԱՄ	Որևէ ավանդական մեթոդ	Ժամանակակից հինգնագապում	Ընդհատված հարաբեր.	Որևէ ժողով մեթոդ	Ոչ մի մեթոդ չի օգտագործում	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)	
<b>ԲՈՒՆՈՐ ԿԱՆԱՅԷ</b>																
15-19	2.2	1.5	0.2	0.2	0.0	0.2	0.0	0.0	0.9	0.6	0.0	0.6	0.0	97.8	100.0	1160
20-24	28.2	11.2	0.4	3.0	0.0	4.0	0.3	0.2	3.3	16.8	0.9	15.9	0.1	71.8	100.0	1007
25-29	56.8	23.1	1.6	9.3	0.0	9.0	0.3	0.0	2.8	32.7	3.3	29.4	0.9	43.2	100.0	769
30-34	61.8	25.7	1.7	11.4	0.0	9.1	1.9	0.4	1.2	35.5	4.0	31.5	0.6	38.2	100.0	763
35-39	60.2	20.3	0.9	10.9	0.0	5.5	2.4	0.1	0.4	38.2	6.0	32.2	1.7	39.8	100.0	962
40-44	48.3	14.8	0.4	6.3	0.2	3.9	4.0	0.0	0.0	31.6	4.2	27.4	1.9	51.7	100.0	947
45-49	30.9	10.7	0.3	4.3	0.0	1.7	4.4	0.0	0.0	18.2	4.5	13.8	2.0	69.1	100.0	822
Ընդամենը	39.0	14.4	0.7	6.1	0.0	4.4	1.8	0.1	1.2	23.6	3.1	20.5	1.0	61.0	100.0	6430
<b>ՀԱՐՑՄԱՆ ՊԱՐԻՆ ԱՄՈՒՍՆԱԳԱԾ ԿԱՆԱՅԷ</b>																
15-19	25.5	18.0	2.1	2.8	0.0	2.6	0.0	0.0	10.5	7.5	0.0	7.5	0.0	74.5	100.0	99
20-24	55.3	21.9	0.8	5.9	0.0	7.6	0.6	0.5	6.5	33.2	1.8	31.4	0.2	44.7	100.0	511
25-29	69.6	28.2	2.0	11.2	0.0	11.0	0.3	0.0	3.5	40.2	4.1	36.2	1.1	30.4	100.0	625
30-34	71.4	29.7	1.9	13.2	0.0	10.6	2.2	0.4	1.4	41.0	4.6	36.4	0.7	28.6	100.0	660
35-39	70.9	23.8	1.1	12.8	0.0	6.5	2.7	0.2	0.5	45.0	7.0	38.0	2.0	29.1	100.0	816
40-44	58.7	17.9	0.5	7.7	0.3	4.8	4.6	0.0	0.0	38.7	5.2	33.5	2.2	41.3	100.0	773
45-49	38.9	12.9	0.2	5.6	0.0	2.2	5.0	0.0	0.0	23.4	5.8	17.7	2.5	61.1	100.0	640
Ընդամենը	60.5	22.3	1.1	9.4	0.1	6.9	2.7	0.2	1.9	36.7	4.8	31.9	1.5	39.5	100.0	4125

Նշում. 1 մեթոդից ավել օգտագործման դեպքում աղյուսակում ներկայացված է միայն ամենաարդյունավետ մեթոդը:

**Գծապատկեր 5.1 Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումն ամուսնացած կանանց կողմից ըստ մեթոդի տեսակի**



Նշում. Կլորացման պատճառով ընդամենը կարող է հավասար չլինել 100-ի

Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Ամուսնացած կանանց մոտ ավանդական մեթոդների օգտագործումը (37%) 2.3-ով գերազանցում է ժամանակակից մեթոդների օգտագործումը (22%): (Նկար 5.1.) Ամենատարածված օգտագործվող մեթոդն է ընդհատված սեռական հարաբերությունը:

Հարցման պահին ընդհատված սեռական հարաբերությունների օգտագործումը (32%) երեք անգամ գերազանցում է ՆԱՊ-ի օգտագործումը (9%) կամ պահպանակի օգտագործումը (7%): Ամուսնացած կանանց շրջանում ընդհատված սեռական հարաբերության օգտագործման մակարդակը ավելի բարձր է քան նախկին Խորհրդային միության որևէ այլ երկրում, որտեղ իրականացվել է ԺԱՀ: Օրինակ՝ Կենտրոնական Ասիայի երկրներում այդ մեթոդն օգտագործում է ամուսնացած կանանց 3%-ը Ղազախստանում (APM and MI, 1999) և Ուզբեկստանում (IOG and MI, 1997) 5%-ը Թուրքմենստանում (MOH and ORCM, 2001) և 6%-ը Ղրղստանում (RIOP and MI, 1998: Վրաստանում անցկացված հետազոտության տվյալները (Serbanescue et al., 2000) ցույց են տալիս մեթոդի օգտագործման 11%, դա ավելի բարձր է Կենտրոնական Ասիայի երկրների համեմատ, սակայն Հայաստանի համեմատությանը կազմում է ընդամենը մեկ երրորդը (Serbanescu et al., 2000): Ավելին, ընդհատված սեռական հարաբերությունը հարցման պահին ամուսնացած կանանց մոտ Վրաստանում կազմում է հակաբեղմնավորիչների օգտագործման մեկ չորրորդը, երբ Հայաստանում այն կազմում է մեկ հինգերորդը: Ընդհանուր առմամբ, ըստ ՀԺԱՀ համաշխարհային տվյալների ընդհատված սեռական հարաբերության մակարդակը Հայաստանում երեք անգամ ավելի բարձր է քան մյուս բոլոր երկրներում, բացառությամբ Թուրքիայի (HU and MI, 1999) որտեղ ամուսնացած կանանց 24 տոկոսն օգտագործում է ընդհատված սեռական հարաբերություն:

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը տատանվում է ամենացածրից՝ 15-19 տարիքային խմբում (կանանց մեկ քառորդը) մինչև ամենաբարձրը՝ 25-39 տարիքային խմբում (կանանց երկու երրորդը): Այս պատկերը ճշմարիտ է որոշ մեթոդների համար՝ մի քանի բացառություններով: ԼԱՄ-ը 15-19 և 20-24 տարիքային խմբերի կանանց կողմից օգտագործվող ամենատարածված մեթոդն է (ծնելիության ամենաբարձր մակարդակի հետ մեկտեղ - տես գլուխ 4-ը), մինչդեռ կնոջ ստերիլացումն առավել տարածված է մեծահասակ կանանց մոտ: Հարկ է նշել, որ կանանց ստերիլացումը հիմնականում կատարվում է ոչ թե որպես հակաբեղմնավորման մեթոդ, այլ՝ բժշկական ցուցումներով:

## 5.4 Հարցման պահին օգտագործումն ըստ հիմնական բնութագրիչների

Աղյուսակ 5.5-ը ցույց է տալիս, որ հարցման պահին ամուսնացած կանանց մոտ հակաբեղմնավորիչների օգտագործման ընդհանուր մակարդակները փոքր-ինչ տարբեր են ըստ հիմնական բնութագրիչների: Օրինակ՝ հակաբեղմնավորման մեթոդները կիրառվում են բոլոր կրթական մակարդակների և բնակավայրերի կանանց մեծամասնության կողմից, բացառությամբ կենդանի երեխա չունեցող կանանց:

Սակայն, ըստ հիմնական բնութագրիչների, զգալի տարբերություն կա օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդների տեսակների հարցում: Օրինակ, բոլոր կրթական մակարդակների կանայք հավասարապես օգտագործում են հակաբեղմնավորման մեթոդներ, սակայն բարձրագույն կրթություն ունեցող կանայք շուրջ երկու անգամ ավելի հաճախ նախընտրում են օգտագործել ժամանակակից մեթոդներ, քան տարրական և միջնակարգ կրթություն ունեցող կանայք (35 տոկոս, 13 տոկոս, 18 տոկոս համապատասխանաբար): Ինչ վերաբերում է ավանդական մեթոդներին, ապա բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի հակված են օգտագործել բնական օրացույցային մեթոդը և ավելի քիչ են հակված օգտագործել ընդհատված սեռական հարաբերությունները: Ընդհանուր առմամբ, գյուղական վայրերում ապրող կանայք առավել հակված են օգտագործել ավանդական մեթոդներ: Ընդհատված սեռական հարաբերությունը օգտագործվում է քաղաքում բնակվող կանանց մեկ չորրորդի կողմից (26տոկոս), մինչդեռ գյուղաբնակ կանանց 40 տոկոսը փորձում է կանխել իր պտղաբերությունը ընդհատված սեռական հարաբերության միջոցով (Գծապատկեր 5.2):

Մեթոդի օգտագործումը տարբեր է նաև ըստ մարզերի: Ինչ վերաբերում է ամենատարածված ընդհատված սեռական հարաբերություններին, ապա կանանց գրեթե մեկ երրորդը բոլոր մարզերում

(բացի Երևանից և Սյունիքից) հարցման պահին օգտագործել են այն: Վայոց ձորում գրանցվել է ընդհատված սեռական հարաբերությունների ամենաբարձր օգտագործումը (48%): Երևանում կանանց 21%-ն է վստահում ընդհատված սեռական հարաբերությունների: Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործումը տատանվում է ամենաբարձրը 28% (Երևանում) մինչև ամենացածրը՝ 13% (Սյունիքում): ՆԱՊ օգտագործում է Երևանի, Արարատի, Լոռու և Շիրակի հարցման պահին ամուսնացած կանանց գրեթե 10%-ը Վայոց ձորի 3%-ի համեմատությամբ: Պահպանակ է օգտագործում հարցման պահին ամուսնացած 10 կանացից մեկը Երևանում (12%) և Տավուշում (11%), սակայն ավելի քիչ քան 30-ից մեկը՝ Արագածոտնում (2%) և Գեղարքունիքում (3%): Չնայած ընտրանքային փոփոխականությունը կարող է որոշ տարբերությունների պատճառ հանդիսանալ, սակայն կանացի ստերիլացումը գերիշխող է Արարատում և Վայոց Ձորում: Կոտայքում և Սյունիքում կանանց մոտավորապես կեսը չի օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ:

Աղյուսակ 5.5 Հարցման պահին հակաբեղմնավորիչների օգտագործումն ըստ հիմնական բնութագրիչների


Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Ժամանակակից մեթոդ							Ավանդական մեթոդ							Կանանց քվաքանակը (մարդ)	
	Օգտագործում է որևէ մեթոդ	Օգտագործում է որևէ ժաման. մեթոդ	Հաբեր	ՆԱՊ	Ներարկուն-ներ	Պահպանակ	Կնոց ստե-րիլացում	Փրփուր/գել/քսուր	ԼԱՄ	Որևէ ավանդական մեթոդ	Ընդհատված մեթոդ	Ընդհատված մեթոդ	Որևէ մեթոդ	Ոչ մի մեթոդ		
<b>Բնակավայրը</b>																
Քաղաքային	59.1	24.5	1.2	9.8	0.1	9.0	2.3	0.2	1.9	32.8	6.4	26.4	1.8	40.9	100.0	2391
Գյուղական	62.5	19.2	1.0	8.9	0.0	4.0	3.1	0.1	2.0	42.2	2.7	39.5	1.1	37.5	100.0	1733
<b>Մարզը</b>																
Երևան	57.1	28.1	1.4	9.9	0.0	11.7	2.3	0.4	2.3	27.4	6.6	20.8	1.6	42.9	100.0	1291
Արագածոտն	63.0	14.6	0.6	7.8	0.0	2.4	2.1	0.0	1.5	48.1	3.9	44.2	0.3	37.0	100.0	193
Արարատ	66.3	25.8	1.0	11.4	0.0	5.3	6.1	0.0	2.0	40.0	4.3	35.7	0.5	33.7	100.0	449
Արմավիր	65.3	18.0	1.2	9.3	0.3	3.3	1.5	0.3	2.1	42.8	4.8	38.0	4.5	34.7	100.0	373
Գեղարքունիք	56.2	18.3	0.6	8.1	0.0	2.9	3.5	0.0	2.9	37.1	2.6	34.5	0.9	43.8	100.0	341
Լոռի	68.1	21.1	0.7	11.9	0.4	3.7	1.9	0.0	2.6	45.9	4.1	41.9	1.1	31.9	100.0	323
Կոտայք	52.5	14.0	0.0	7.6	0.0	4.0	1.4	0.0	1.1	37.4	2.5	34.9	1.1	47.5	100.0	316
Շիրակ	65.4	23.7	2.6	11.9	0.0	6.7	1.9	0.0	0.6	39.7	5.8	34.0	1.9	34.6	100.0	388
Սյունիք	49.7	12.7	0.3	5.7	0.0	4.4	0.9	0.0	1.3	35.8	5.4	30.4	1.3	50.3	100.0	173
Վայոց ձոր	65.9	15.0	0.6	2.5	0.0	3.8	6.3	0.0	1.6	50.3	2.8	47.5	0.6	34.1	100.0	79
Տավուշ	63.8	21.8	1.1	6.5	0.0	10.5	3.1	0.0	0.6	41.0	2.5	38.4	1.1	36.2	100.0	198
<b>Կրթությունը</b>																
Տարր./միջին	50.2	13.2	1.0	5.3	0.0	1.4	4.2	0.0	1.3	35.1	1.3	33.8	1.9	49.8	100.0	276
Միջնակարգ	59.2	17.9	1.0	8.0	0.0	4.0	2.3	0.3	2.3	40.2	3.1	37.2	1.1	40.8	100.0	1537
Միջնակարգ-մասնագիտական	62.1	22.3	1.0	9.4	0.1	7.2	2.8	0.0	1.6	38.3	5.7	32.6	1.5	37.9	100.0	1603
Բարձրագույն	63.8	35.3	1.5	14.2	0.0	14.6	2.7	0.2	2.0	26.4	8.0	18.4	2.2	36.2	100.0	708
<b>Կենդանի երեխաների քվաքանակը</b>																
Ոչ մի	5.3	3.0	0.0	0.0	0.0	2.4	0.6	0.0	0.0	2.3	0.0	2.3	0.0	94.7	100.0	226
1	50.7	26.5	0.5	6.1	0.2	10.5	2.1	0.3	6.8	23.4	2.6	20.9	0.8	49.3	100.0	514
2	68.6	26.3	1.9	12.2	0.0	8.5	2.2	0.2	1.3	40.3	6.5	33.8	2.0	31.4	100.0	1770
3	65.3	19.9	0.7	9.4	0.1	5.1	3.3	0.1	1.2	44.0	5.0	39.0	1.4	34.7	100.0	1231
4+	53.3	16.7	0.3	6.9	0.0	2.8	4.8	0.0	1.9	35.2	2.6	32.6	1.4	46.7	100.0	384
Ընդամենը	60.5	22.3	1.1	9.4	0.1	6.9	2.7	0.2	1.9	36.7	4.8	31.9	1.5	39.5	100.0	4125

Նշում. 1 մեթոդից ավելի օգտագործման դեպքում աղյուսակում ներկայացված է միայն ամենաարդյունավետ մեթոդը:

**Գծապատկեր 5.2 Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումն ամուսնացած կանանց կողմից ըստ բնակավայրի**



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

**5.5 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշներն ըստ այլ հետազոտությունների**

ՀԺԱՀ արդյունքները նման են վերջին տարիներին իրականացված վերարտադրողական առողջության հարցերի վերաբերյալ հետազոտությունների արդյունքներին, որոնք ներկայացուցչական են ազգային մակարդակով: Համաձայն 1998թ. իրականացված հետազոտության, ամուսնացած կանանց 57%-ն օգտագործել է հակաբեղմնավորման մեթոդներ, իսկ հարցման պահին օգտագործողների երկու երրորդը վստահել է ընդհատված սեռական հարաբերություններին (1998թ. Մ.Խաչիկյան և Ռ.Աբրահամյան): Նմանապես, ըստ 1997թ. հետազոտության տվյալների ամուսնացած կանանց 60%-ն օգտագործել է որևէ մեթոդ, կեսից փոքր-ինչ ավելին՝ ընդհատված սեռական հարաբերություններ (Վերարտադրողական առողջության Հայաստանի ազգային ծրագիր, ՀՀ Առողջապահության նախարարություն, 1998թ.):

**5.6 Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման դադարեցումը 12 ամսվա ընթացքում**

Աղյուսակ 5.6-ը ցույց է տալիս հակաբեղմնավորիչների օգտագործման դադարեցման ցուցանիշները: Ընդհանուր առմամբ հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործողների 40%-ը դադարեցրել է օգտագործումը 12 ամսվա ընթացքում: Առաջին տարվա ընթացքում դադարեցման ցուցանիշն ամենացածրն է ՆԱՊ օգտագործողների մոտ (7%) և ամենաբարձրն է ԼԱՍ օգտագործողների մոտ (77%), որը կարող է օգտագործվել միայն առաջին 6 ամսվա ընթացքում:



Պահպանակ, ժամանակավոր ինքնագույն և ընդհատված սեռական հարաբերություններ օգտագործողների 10-ից մոտավորապես 4-ը դադարեցրել է մեթոդի կիրառումը առաջին տարվա ընթացքում:

Աղյուսակ 5.6. Առաջին տարում հակաբեղմնավորիչների օգտագործման դադարեցման ցուցանիշները

Հակաբեղմնավորիչներ օգտագործողների տոկոսային բաշխումը, ովքեր դադարեցրել են օգտագործումը 12 ամվա ընթացքում հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում, ըստ դադարեցման պատճառի և մեթոդի, Հայաստան 2000թ. (%)

Դադարեցված մեթոդ Ընդամենը	Դադարեցման պատճառը				Սյլ պատճառ
	Ոչ հուսալի մեթոդ	Հղիա- նալու- ցանկու- թյուն	Անցել է այլ մեթո- դի	Այլ պատճառ	
ՆԱՊ	1.4	0.6	1.8	2.8	6.5
Պահպանակ	13.0	5.7	8.9	11.3	38.9
Լակտացիոն ամենօրեայի մեթոդ	24.9	4.6	31.1	16.4	77.0
Ժամանակավոր ինքնագույն Ընդհատված սեռական հարաբերություն	21.4	3.9	7.6	5.0	37.9
	28.6	3.8	3.3	3.5	39.2
Ընդամենը	22.4	3.7	7.3	6.2	39.6

<sup>1</sup>Դադարեցման հաջորդ ամսում օգտագործել են այլ մեթոդ, կամ նշել են, որ ցանկացել են ավելի արդյունավետ մեթոդ և սկսել են օգտագործել մեկ այլ մեթոդ՝ դադարեցումից հետո՝ 2 ամսվա ընթացքում:

Աղյուսակ 5.7-ը ցույց է տալիս հակաբեղմնավորման տարբեր մեթոդների դադարեցումը հարցմանը նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում՝ ըստ դադարեցման պատճառների Դադարեցումների մոտավորապես կեսը պայմանավորված է եղել մեթոդի անարդյունավետությամբ, այսինքն՝ պատահական հղիությամբ: Ժամանակավոր ինքնագույն, ընդհատված սեռական հարաբերությունների և լվացումների (ամենատարածված ժողովրդական մեթոդ) ցածր արդյունավետությունը հիմնավորվում է մեթոդի անհուսալիության բարձր աստիճանով: Նկար 5.3

Ինչպես արդեն նշվել է ընդհատված սեռական հարաբերությունը ամենատարածված հակաբեղմնավորման մեթոդն է: Այն օգտագործվում է հարցման պահին ամուսնացած 32 տոկոս կանանց կողմից, ինչը կազմում է հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման կեսը: Կիրառողների 29 տոկոսը դադարեցրել է օգտագործումը 1 տարվա ընթացքում մեթոդի անարդյունավետության պատճառով, այսինքն՝ պատահական հղիությամբ: Դա կազմում է դադարեցումների երկու երրորդը: Ջարմանալի է, որ մեթոդի ձախողումը ավելի հաճախ հանդիպում է այն կանանց մոտ ովքեր օգտագործում են ամենատարածված մեթոդը: Այլ կերպ՝ Հայաստանի կանանց զգալի մասին, որ փորձում է կանխել իր պտղաբերությունը՝ կիրառելով ընդհատված սեռական հարաբերությունը, չի հաջողվում անել դա: Նկատելի է, որ գյուղական բնակավայրերում, որտեղ ընդհատված սեռական հարաբերությունը կիրառվում է զգալիորեն ավելի շատ քան քաղաքային բնակավայրերում (40 տոկոս 26 տոկոսի դիմաց) աբորտների ընդհանուր ցուցանիշները նույնպես զգալի բարձր են (3.4 2.1-ի դիմաց):

**Աղյուսակ 5.7. Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման դադարեցման պատճառները**

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումից հետո՝ 12 ամսվա ընթացքում դադարեցումների տոկոսային բաշխումն ըստ դադարեցման հիմնական պատճառի և մեթոդի, Հայաստան, 2000


(%,%)

Դադարեցման պատճառը	Դադարեցրել է ժամանակակից մեթոդ			Դադարեցրել է ավանդական/ժողովրդական մեթոդ					
	Հաբեր	ՆԱՊ	Պահպանակ	ԼԱՍ	Ընդհատված կավոր ինքնազսպում	Ընդհատված սեռական հարաբերություն	Լվացում	Այլ մեթոդ	Բոլոր մեթոդները
Հղիացել է օգտագործելիս	17.8	8.5	33.1	32.0	57.2	67.32	64.2	58.7	52.8
Ցանկանում էր հղիանալ	7.0	5.2	16.0	5.8	9.1	9.4	4.5	0.0	9.1
Կողմնակի հետևանքներ	7.4	11.3	3.2	0.4	0.5	0.8	0.0	3.4	1.9
Առողջական խնդիրներ	38.5	60.1	2.4	0.6	0.3	1.1	7.5	3.9	6.8
Մատչելիությունը	7.9	0.4	4.1	0.0	0.0	0.1	1.2	0.0	0.8
Ցանկացել է ավելի արդյունավետ մեթոդ	2.7	2.8	3.6	28.3	11.0	5.1	7.8	12.1	7.8
Հարմար չէ օգտագործել	3.9	1.1	7.0	35.6	3.2	1.1	1.5	10.2	2.6
Շատ քանկ է	6.4	0.0	5.8	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.9
Ամուսինը հավանություն չի տալիս	0.0	1.5	7.6	0.7	3.4	4.2	0.0	0.0	3.7
Հազվադեպ սեռ. հարաբ./ Ամուսինը բացակայում է	6.8	5.4	9.6	1.4	9.7	7.3	10.2	0.0	7.0
Ամուսնական խնդիրներ/ բաժանություն	0.0	1.1	0.9	0.2	0.5	0.5	0.0	0.0	0.5
Դժվար է հղիանում/մեծնալուզա	0.0	1.3	1.3	0.4	2.2	1.0	3.0	7.8	1.2
Դատապարտված է	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.4	0.0	0.0	0.3
Այլ պատճառ	1.6	1.4	1.9	22.1	1.6	0.7	0.0	3.9	3.3
Զգիտի	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պատասխան չկա	0.0	0.0	3.4	2.4	0.8	1.1	0.0	0.0	1.3
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
Դադարեցումների թիվը	71	254	373	336	290	1786	91	29	3230

Նշում՝ Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-ից 49 չկշռված դեպքերի վրա:

**Գծապատկեր 5.3 Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման դադարեցումն ըստ մեթոդի ծախսողման**

Օգտագործողների հարաբերակցությունը, ովքեր 12 ամսվա ընթացքում դադարել են մեթոդի օգտագործումը



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

ՀԺԱՀ տվյալները նաև ցույց են տալիս, որ կանանց մեկ չորրորդը, որ վստահում է լակտացիոն ամենորեայի մեթոդին նույնպես պատահականորեն հղիացել է 12 ամսվա ընթացքում, ինչը ենթադրում է, որ Հայաստանի կանայք այդ մեթոդը ճիշտ չեն օգտագործում: Ոչ ճիշտ օգտագործման մի ցուցանիշ է այն, որ ԼԱՄ օգտագործողների շուրջ կեսը նշել է, որ նրանք դեռ վստահում են այդ մեթոդին ծննդաբերությունից ավելի քան 6 ամիս անց (տվյալները ցույց չեն տրված), ինչը ավելի երկար ժամանակահատված է, քան կարող է արդյունավետ կիրառվել այդ մեթոդը:

Ժամանակավոր ինքնազսպման դադարեցման 57%-ը, լվացումների դադարեցման 64% և պահպանակների դադարեցման 33 տոկոս դեպքերը գրանցվել են որպես ոչ հուսալի մեթոդ: Հաբերի և ՆԱՊ-ի օգտագործման դադարեցման հիմնական, ամենատարածված պատճառը եղել է առողջության մասին անհանգստությունը (39% և 60% համապատասխանաբար): Չնայած, որ դադարեցումների մեծամասնությունը վերագրվում է մեթոդի անարդյունավետությանը, 9% դեպքերում կանայք դադարեցրել են հակաբեղմնավորիչների օգտագործումը հղիանալու նպատակով:

## 5.7. Հարցման պահին օգտագործումն ըստ կնոջ կարգավիճակի

Պտղաբերությունը վերահսկելու նպատակով հակաբեղմնավորման մեթոդ օգտագործելու կնոջ ունակությունը մեծամասամբ կախված է նրա կարգավիճակից և այն օգտագործելու իրավունքից: Ենթադրվում է, որ այն կանայք, ովքեր ավելի լիազորված են այդ առումով, ունեն իրենց կյանքի բոլոր ասպեկտներն ավելի լավ վերահսկելու հնարավորություն, ներառյալ նաև պտղաբերությունը: ՀԺԱՀ-ն տվյալներ է հավաքագրել կնոջ լիազորվածության երեք ցուցանիշների վերաբերյալ՝ որոշումների թիվը, երբ վերջնական որոշում կայացնողը կինն է, պատճառների թիվը, երբ կինը կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն և պատճառների թիվը, որոնց դեպքում հարցվողը արդարացում է ամուսնուն կնոջը ծեծելու հարցում: Այս հատվածն ուղղված է հակաբեղմնավորիչների օգտագործման և կնոջ կարգավիճակի կապին: (Տես գլուխ 3 այս ցուցանիշների բացատրության համար):

Աղյուսակ 5.8-ը ցույց է տալիս կնոջ լիազորվածության այս երեք ցուցանիշներից յուրաքանչյուրի կապը հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման հետ, հարցման պահին ամուսնացած 15-49 տարեկան կանանց մոտ: Ընդհանուր առմամբ կարգավիճակի առաջին երկու ցուցանիշների բարձր միավորներ ունեցող և կնոջ կարգավիճակի երրորդ ցուցանիշի ցածր մակարդակով կանայք ավելի հակված են օգտագործել հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ: Օրինակ՝ մասնակցող կանանց կեսից քիչն են (45 տոկոս), ովքեր վերջնական որոշում չեն կայացնում տնային տնտեսությունում, օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ, մոտավորապես երեք և ավելի դեպքերում որոշում կայացնող կանանց երկու երրորդի դիմաց: Նմանապես, ավելի բարձր կարգավիճակ ունեցող կանայք ավելի հակված են օգտագործել ժամանակակից մեթոդ կամ բնական օրացույցային մեթոդ: Երկրորդ ցուցանիշի արդյունքները նույնն են: Բնական օրացույցային մեթոդի օգտագործումը, ինչը պահանջում է կնոջ և տղամարդու միջև հաղորդակցության և համագործակցության բարձր աստիճան, միակ մեթոդն է, որ առավելագույնս կապված է կնոջ կարգավիճակը բնութագրող այս ցուցանիշների հետ: Չնայած երրորդ ցուցանիշը թվում է, թե կապ չունի հակաբեղմնավորիչների օգտագործման հետ, այս արդյունքները ենթադրում են, որ, ընդհանուր առմամբ, կնոջ լիազորվածության տարբեր չափանիշները դրական կախվածության մեջ են Հայաստանում կանանց կողմից հակաբեղմնավորիչների օգտագործումից:

**Աղյուսակ 5.8 Հարցման պահին հակաբեղմնավորիչների օգտագործումն ըստ կանանց կարգավիճակի**

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդի և ըստ կանանց կարգավիճակի ընտրված ցուցանիշների, Հայաստան 2000թ. (%)

Կանանց Կնոջ կարգավի- ճակի ցուցանիշ	Ժամանակակից մեթոդ								Ավանդական մեթոդ							
	Օգտագործում է որևէ որևէ		Սերար-		Կնոջ ստե-Փրփուր/ ԼԱՍ		Ընդհատ-Որևէ ժաման. ված դրույթ		Ոչ մի մեթոդ		Ընդհատ-Որևէ ժաման. ված դրույթ		Ոչ մի մեթոդ			
	մե- թոդ	ժամա կակից մեթոդ	Հաբեր ՆԱՊ	կում- ներ	Պահ- պանակ	րիլա- ցուն	գել/ քուլք	ԼԱՍ	ավան- դական մեթոդ	հինքնա- զսպ.	սեռ. հարաբ.	մե- թոդ	չի օգտա գործում	Ընդաթվաքա- մենը նակը (մարդ)		
<b>Կնոջ կողմից կայացրած որոշումների թիվը</b>																
0	44.7	14.1	1.0	4.9	0.0	3.9	1.5	0.0	2.8	30.6	0.6	30.0	0.0	55.3	100.0	159
1-2	58.5	23.3	1.5	9.3	0.0	6.9	2.2	0.0	3.3	33.8	2.3	31.5	1.3	41.5	100.0	732
3-4	64.0	24.4	0.8	10.7	0.1	7.4	3.3	0.1	2.0	38.0	5.5	32.5	1.6	36.0	100.0	1338
5+	60.2	21.0	1.2	9.0	0.1	6.7	2.5	0.3	1.2	37.5	5.6	31.8	1.6	39.8	100.0	1895
<b>Սեռական հարաբերություններից հրաժարվելու պատճառների թիվը</b>																
0	46.8	11.2	0.0	3.4	0.0	2.0	3.6	0.0	2.2	33.4	1.8	31.5	2.2	53.2	100.0	181
1-2	55.5	22.8	2.0	8.9	0.0	6.9	3.3	0.0	1.7	32.4	4.4	28.0	0.3	44.5	100.0	443
3-4	61.9	22.8	1.0	9.8	0.1	7.1	2.5	0.2	1.9	37.5	5.0	32.4	1.6	38.1	100.0	3501
<b>Կնոջ ծեծն արդարացնող պատճառների թիվը</b>																
0	61.5	24.5	1.0	10.2	0.0	8.3	2.7	0.2	2.0	35.4	5.8	29.5	1.7	38.5	100.0	2681
1-2	61.7	19.8	1.5	9.1	0.0	4.6	3.1	0.0	1.6	40.8	3.6	37.2	1.2	38.3	100.0	884
